ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 փետրվարի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

28
(2694)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 165

ՀՀ կառավարությունը «Լիդիան» ընկերության հետ 250 միլիոն դոլար արժեքով փաթեթ է ստորագրել: ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը հայտարարել է, թե Ամուլսարի հանքը շուտով կշահագործվի: Նիկոլ Փաշինյանի՝ իշխանության գալուց հետո հենց նրա եւ թիմակիցների կողմից Ամուլսարի հանքի շահագործման մասին եղել են տարբեր եւ հակասական հայտարարություններ: Հանքը պետք է աշխատեր դեռ 2018 թվականին, սակայն նույն իշխանությունը, ինչ-ինչ շահերից ելնելով, փակեց թեման: Նիկոլ Փաշինյանը խորհրդարանի ամբիոնից հայտարարում էր, թե Սեւանա լիճը իր համար Ղարաբաղի հարցին հավասար թեմա է, եւ եթե անգամ մի թեթեւ վնաս է կրելու հանքի շահագործումից, ուրեմն հանքը չի բացվի: Վերհիշենք նախորդ հայտարարությունները. 2018 թվականի հոկտեմբերի 24-ին Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում հայտարարեց. «Ամուլսարի մասին ի՞նչ ենք ասում. մեզ պետք է փաստ եւ փաստարկ, որ Սեւանի համար այդտեղ վտանգներ չկան: Ասում են՝ չկա, հավատացե՛ք մեր խոսքին, փաստաթղթերին: Սեւանի հարցը Ղարաբաղի նման հարց է, չի կարելի ուղղակի փակ աչքերով գնալ այդտեղ»: Ներկայումս ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սերգեյ Բագրատյանը 2021 թվականի օգոստոսի 23-ին ասում էր. «Հանքարդյունաբերությունը չպետք է շարունակել երկրում, եւ նախկինում էլ այնպիսի հանքարդյունաբերություն, որ վնասում էր բնապահպանությանը եւ մեր բնակիչների առողջությանը, պետք է բերվեն միջազգային ստանդարտներին: Պետք է դադարեցնել եւ չսպասարկել զարգացած երկրների շահերը»: Տարօրինակ է, թերեւս, ՔՊ-ական նախկին բնապահպան-ակտիվիստների քար լռությունը, որոնք Սերժ Սարգսյանի օրոք առիթը բաց չէին թողնում խոսելու հանքի շահագործման վտանգների մասին: Նույն Լենա Նազարյանը, որ դեռեւս ընդդիմադիր պատգամավոր եղած ժամանակ պայքարում էր հանքի շահագործման դեմ, բնապահպանական ակցիաների էր մասնակցում, ճանապարհներ էր փակում, խոսում էր հանքի շահագործման վտանգավոր ռիսկերի մասին, հիմա, սակայն, տարօրինակ կերպով լռում է:

«Ռուբեն Վարդանյանին պետական նախարարի պաշտոնում նշանակել եմ իմ որոշմամբ ու առաջարկն արել եմ իմ նախաձեռնությամբ... Գիտակցելով Արցախի ու մեր ժողովրդի հանդեպ պատասխանատվությունը՝ Արցախը զարգացնելու եւ առաջիկա մարտահրավերներին դիմագրավելուն պատրաստ լինելն ապահովելու փոխարեն մեր բոլորիս եւ պետության (առանց փակագծեր բացելու)՝ բոլոր առումներով դիմադրողականությունը չսպառելու համար որոշում եմ կայացրել Ռուբեն Վարդանյանին ազատելու պետական նախարարի պաշտոնից»,- երեկ իր սպասված ուղերձում այսպիսի հայտարարությամբ հանդես եկավ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը: Հիշեցնենք, որ Ռուսաստանի Դաշնությունից Արցախ մշտական բնակության տեղափոխված Ռուբեն Վարդանյանը գրանցված է Արայիկ Հարությունյանի՝ Ստեփանակերտի տան վրա, եւ նրանք իրապես ունեցել են ջերմ հարաբերություններ մինչեւ պետնախարարի պաշտոնի ստանձնումը: Երբ Ռուբեն Վարդանյանը նշանակվեց պետնախարար, նրա թիմակիցները ակնհայտորեն սկսեցին աշխատել Արայիկ Հարությունյանի դեմ: Նրանցից է հատկապես Մեսրոպ Առաքելյանը, որն «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիրն է եւ Ռուբեն Վարդանյանի թիմում համակարգում է տեղեկատվական ոլորտը: Տարբեր տեղեկությունների համաձայն՝ Արցախի իշխանության, պետական գործիչների դեմ տարաբնույթ լրատվական հարձակումները կազմակերպվում են Առաքելյանի միջոցով, եւ թեեւ երեկվա ուղերձում Արայիկ Հարությունյանը մի քանի անգամ էլի շեշտել էր, որ Վարդանյանն իր ընկերն է եւ շարունակում է մնալ, բայց, միեւնույնն է, եւ Արցախի նախագահի, եւ նոր նշանակվող պետնախարար, Արցախի գլխավոր դատախազ Գուրգեն Ներսիսյանի եւ էլի շատերի դեմ արշավը փաստացի համակարգվում է նույն Վարդանյանի առաքելյանական թիմի կողմից:



ՄԻՊ թեկնածուի առաջադրման հարցը շարունակում է գլխացավանք մնալ իշխող խմբակցության համար: Ըստ «ԱԺ կանոնակարգ» օրենքի՝ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, նոր ՄԻՊ պետք է ընտրվի: «ԱԺ կանոնակարգ» օրենքը սահմանում է, որ եթե սահմանված 10-օրյա ժամկետում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին թեկնածու չի առաջադրվում, ապա դրանից հետո՝ էլի տասնօրյա ժամկետում, պետք է առաջադրում լինի. դարձյալ տասնօրյա ժամկետ է սահմանվում. մինչեւ 3-րդ ամսվա վերջին օրը պետք է արդեն օմբուդսմենն ընտրված լինի: ԱԺ հանձաժողովից տեղեկացանք, որ առաջադրման երրորդ տասնօրյակն է լրանում, սակայն թեկնածու այդպես էլ չի նշմարվում. ո՛չ իշխող ֆրակցիան, ո՛չ էլ ընդդիմությունը թեկնածու չեն գտնում: ՔՊ-ականները դժգոհում են, թե ում առաջարկում են առաջադրվել այդ պաշտոնում, չի ցանկանում: Ընդդիմությունն էլ թեկնածու չի առաջադրում, քանի որ վստահ է՝ ում էլ առաջադրեն, միեւնույնն է, իշխող ֆրակցիան չի ընտրելու: Ստացվում է՝ իշխող ֆրակցիան ո՛չ ինքն ունի թեկնածու, ո՛չ էլ ցանկանում է ընդդիմության թեկնածուի շուրջ համաձայնության գալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ականները խմբակցության նիստերից մեկի ժամանակ տեսակետ են գեներացրել, որ թեկնածու չգտնելու դեպքում մտադիր են ՄԻՊ թեկնածու առաջադրել հենց իրենց խմբակցության պատգամավորներից մեկին. հակված են՝ կին թեկնածու լինի: Թեեւ ՔՊ-ականները իրենք էլ դեմ են այս պաշտոնում առաջադրվելու գաղափարին (քանի որ ՄԻՊ-ը պետք է լինի անկուսակցական), սակայն ասում են, որ եթե Նիկոլ Փաշինյանն ասաց, չեն կարող հակադրվել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հարավային Կովկասում եւ Վրաստանում ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարն այսօր կգա Հայաստան: Մեր տեղեկություններով՝ նա հանդիպում կունենա ՀՀ բարձրագույն ղեկավարության հետ: Նշենք, որ վերջին անգամ Տոյվո Կլաարը Հայաստան էր եկել մեկ ամիս առաջ՝ հունվարի 23-ին: Նա այդ ժամանակ գրառում էր կատարել եւ ասել. «Մեկօրյա հանդիպումներով՝ վերադարձ Երեւան: Լաչինի միջանցքի շուրջ իրավիճակը լուրջ է, եւ պետք է շտապ լուծումներ գտնել»: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս անգամ Հայաստանի այցի նպատակներից են նաեւ (բացի Լաչինի շուրջ ստեղծված իրավիճակը քննարկելուց) ԵՄ առաքելության հետ կապված հարցերը: Ինչպես հայտնի է, փետրվարի 21-ին ԵՄ-ն պաշտոնապես հայտարարել է Հայաստանում քաղաքացիական դիտորդական առաքելության աշխատանքի մեկնարկի մասին: ԵՄ առաքելության կենտրոնակայանը Եղեգնաձորում է: ԵՄ դիտորդական առաքելությունը կազմված է 100 դիտորդից:

ԳԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆՔ

ԹՈՒՂԹԸ ՀԱՐՑ ՉԻ ԼՈՒԾԵԼ

Արդարադատության միջազգային դատարանը հրաժարակել է Լաչինի միջանցքի աղաւորջափակման վերաբերյալ ժամանակավոր միջոց կիրառելու Հայաստանի դիմումի մասին որոշումը:

Այսպիսով, դատարանը եզրակացնում է, որ Ադրբեջանը պարտավոր է, իր՝ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների համաձայն, ձեռնարկել իրենից կախված բոլոր միջոցները, որպեսզի ապահովի անձանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ: Հաագայի դատարանի այս որոշման շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանի հետ:

-Պարոն Մելիքյան, կմանրամասնե՞ք՝ ինչ է իրենից ենթադրում այս որոշումը, ինչ ուժ ունի այն:

-Ադրբեջանն իրենից կախված ամեն ինչ պետք է անի, որպեսզի Լաչինի միջանցքը բացվի: Հաագայի դատարանի երեկվա որոշումն այս առումով ավելի առաջընթաց է, քան Եվրոպական դատարանի միջանկյալ որոշումը. մոտ մեկուկես ամիս առաջ Եվրոպայի դատարանը նույնպես որոշում էր կայացրել, որով Ադրբեջանին պարտադրել էր առանձին կատեգորիայի անձանց համար ճանապարհը բացել, դրանք կլինեին հիվանդներ, վերամիավորման խնդիր ունեցող ընտանիքներ եւ այլն: Դատարանը, միեւնույն ժամանակ, մերժել է Արցախի գազամատակարարման եւ էլեկտրամատակարարման հետ կապված Հայաստանի կողմից բարձրացված հարցը, ինչը զարմանալի է: Որքան հաճելի է կարդալ դատարանի որոշման առաջին մասը, նույնքան տարօրինակ էր որոշման երկրորդ մասը, թե ինչպես կարող է բավարար ապացույցներ ներկայացված չլինեն, որ Ադրբեջանն է Արցախի գազամատակարարումը խափանում:

Բայց շատ ավելի կարեւոր հարց կա՝ որքանո՞վ կատարվեց Եվրոպական դատարանի որոշումը, արդյոք այն կատարվե՞ց, կա՞մ արդյոք որեւէ մեխանիզմ այս որոշումն ի կատար ածելու համար: Ի վերջո, այնտեղ գնահատողական արտահայտություններ են օգտագործված, ինչպես, օրինակ, «Ադրբեջանը ողջ հնարավորությունները պետք է օգտագործի». սա որոշակի դաշտ է տալիս Ադրբեջանին, որպեսզի նշի, թե ինքը, օրինակ, չկարողացավ իր հասարակության ներկայացուցիչների, ինչպես իրենք են պնդում, բնապահպանների վրա որոշակի ազդեցություն ունենալ: Առհասարակ, ես կարծում եմ, որ մենք՝ իրավաբաններս, շատ ենք գնահատում իրավական փաստաթղթերի նշանակությունը՝ մոռանալով հողի վրա տեղի ունեցողը: Ես ամենեւին վստահ չեմ, որ այս որոշումից հետո մենք կունենանք դրական տեղաշարժ, թեեւ դրա հավանականությունը մեծ եմ համարում ոչ այնքան այս որոշման, որքան աշխարհաքաղաքական պատճառներով:

-Պարոն Մելիքյան, եթե Ադրբեջանը հրաժարվի կատարել դատարանի վճիռը, պատժամիջոցների ի՞նչ գործիքակազմ ունի դատարանը:

-Խնդիրը հենց այն է, որ միջազգային իրավունքում նման լծակներ գոյություն չունեն, այսինքն՝ այդ լծակները, ի վերջո, հանգեցնում են ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից որոշումներ կայացնելուն: Որքան Եվրոպայի խորհուրդը պատրաստ է սանկցիաներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ, այնքան էլ ՄԱԿ-ի ԱԽ-ն է պատրաստ, այսինքն՝ պարզապես պատրաստ չէ որեւէ պատժամիջոց կիրառել, հենց այս պատճառով եմ ասում՝ մենք հաճախ գերագնահատում ենք իրավական փաստաթղթերի կարեւորությունը: Դրանք, իհարկե, ունեն որոշակի կարեւորություն, բայց ոչ այնքան, որ մենք դրանով կարողանանք հարց լուծել. որեւէ թուղթ երբեք հայրենիքի հարց չի լուծել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

«Փետրվարի 22-ին խորհրդարանում ես եւ իմ գործընկեր Ասպրամ Կրպեյանը հանդիպում ունեցանք ՄԱԿ-ի երեխաների կոմիտեի փոխնախագահ Ֆիլիպ Դ. Ժաֆեի, շվեյցարական Terre des hommes ՀԿ-ի Արդարադատության հասանելիության ծրագրի ղեկավար Յան Կուլիուի հետ»,- հայտարարություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Քննարկեցինք Հայաստանում եւ Արցախում երեխաների խախտված իրավունքներին առնչվող կարեւորագույն հարցեր: Հյուրերի ուշադրությունը հրավիրեցի վերջերս ոստիկանության Էրեբունու բաժանմունքում անչափահասներին ծեծի ենթարկելու դեպքի վրա, որի առնչությամբ զեկույց էի ուղարկել վերջիններիս:

Առանձնահատուկ շեշտեցի Արցախում, ինչպես նաեւ Հայաստանի սահմանապահ գյուղերում ապրող անչափահասների՝ Ադրբեջանի կողմից ոտնահարվող իրավունքները վերականգնելու անհրաժեշտությունը՝ մեկ անգամ եւս հիշատակելով Ադրբեջանի կողմից արցախահայ երեխաներին հոգեբանական բռնության ենթարկելու դեպքը:

Հյուրերը մտահոգված էին մարդու իրավունքների խախտման նման դեպքերով, եւ նրանք էլ ընդգծեցին, որ պատրաստ են ընդլայնել համագործակցությունը մարդու, մասնավորապես՝ երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում: «Առավել գործուն քայլերի, քան պարզապես խոսքերի կարիք կա»,- նշեց ՄԱԿ-ի երեխաների կոմիտեի փոխնախագահը:

Հանդիպման վերջում արձանագրեցի, որ մարդու իրավունքների պաշտպանությունը մշտական գործընթաց է, որը պահանջում է ամենօրյա ժրաջան աշխատանք: Այս առումով կարեւորում եմ քաղաքակիրթ երկրի փորձն ու փորձառությունն ուսանելը»,- եզրափակում է պատգամավոր Թ. Թովմասյանը:

ԽՆԴԻՐՆԵՐ ԿԱՆ

2023 թվականի հունվարի 17-ին ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվել ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագիծը: Նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերում էին մի քանի հոդվածների, որոնց վերաբերյալ Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունները եզրակացություն են տվել եւ նաեւ էական խնդիրներ հայտնաբերել: Մասնավորապես՝ նրանց եզրակացության մեջ նշվում է, թե ներկայացվող փոփոխությունների մեջ առկա են մի շարք խնդրահարույց եւ մտահոգիչ կարգավորումներ: Առաջարկվող նախագծով ներկայացված են փոփոխություններ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմման կարգավորումներում. առաջարկվում է վերանայել արտահերթ կարգով համալրվող ծառայողական ցուցակները եւ վերացնել բարեվարքության ստուգման պահանջը: Ստացվում է՝ արտահերթ համալրման դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ստուգումն այլեւս չի պահանջվի: Նման փոփոխությունը նախագծով որեւէ հիմնավորում չի ստացել: Հասարակական կազմակերպությունները գտնում են, որ բարեվարքության ստուգման բացակայությամբ դատախազների առաջխաղացումը հետընթաց քայլ է ընթացիկ դատահիրավական բարեփոխումների համատեքստում: Իհարկե, այստեղ կարող է արդեն լինել «խնամի-ծանոթ-բարեկամ» սկզբունքի իրագործումը: Միեւնույն ժամանակ, նրանք առաջարկում են դատախազական համակարգում համակարգային փոփոխությունների վերաբերյալ քննարկում կազմակերպել շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ, ինչից հետո միայն ընթացք տալ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին:

ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ

Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը մարտի 8-10-ը կգործուղվի Բրյուսել՝ մասնակցելու Հայաստան-ԵՄ խորհրդարանական գործընկերության կոմիտեի 3-րդ նիստին:

ArmLur.am-ը տեղեկացավ՝ ԱԺ պատվիրակության կազմում կլինեն Հայաստան-ԵՄ ԽԳԿ-ի համանախագահ, Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արման Եղոյանը, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, ՔՊ խմբակցության պատգամավորներ Մերի Գալստյանը, Միքայել Թումասյանը, Տաթեւիկ Գասպարյանը, «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Քրիստինե Վարդանյանը:

Պատգամավորների գործուղման հետ կապված ճանապարհածախսի, օրապահիկի, ինչպես նաեւ գիշերավարձի ծախսերը կկատարվեն պետբյուջեի հաշվին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐ ԳՈՒՅՔ ԿՈՒՆԵՆԱ

«Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք կամրացվի: Այս մասին որոշումն ընդունվեց կառավարության այսօրվա նիստի ժամանակ:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտե է դիմել ԿԳՄՍ նախարարությունը՝ Երեւան քաղաքի Ա. Վեռնոյի փողոց թիվ 3 հասցեում գտնվող անշարժ գույքը սահմանված կարգով «Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» ՊՈԱԿ-ին ամրացնելու խնդրանքով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության որոշման համաձայն «Ջի էմ Դեվելոփեր» ՍՊ ընկերության եւ Պետական գույքի կառավարման կոմիտեի միջեւ կնքված անշարժ գույքի սեփականության իրավունքի փոխանցման պայմանագիրը:

Այս նախագծով առաջարկվում է Ա. Վեռնոյի փողոց 3 հասցեում գտնվող 1971.5 քառ. մետր մակերեսով թատրոնի շենքը, ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող («Ջի էմ Դեվելոփեր» ՍՊ ընկերության հետ համատեղ) 21 քառ. մետր մակերեսով տարածքը եւ դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող («Ջի էմ Դեվելոփեր» ՍՊ ընկերության հետ համատեղ) 0.095569 հա հողամասը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը:

ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ Է ԾԱԽՍԵՐԸ

Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով ՀՀ-ում գտնվող Լեռնային Ղարաբաղի շուրջ 340 քաղաքացիների կացությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ կառավարությունն ընդունել է որոշում:

Հիմնավորման համաձայն՝ 2022 թ. դեկտեմբերի 12-ից սկսած՝ Լեռնային Ղարաբաղի մի շարք քաղաքացիներ դիմել են Հայաստանում Լեռնային Ղարաբաղի օպերատիվ շտաբ եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության գրասենյակներ Լաչինի միջանցքի փակ լինելու հետեւանքով կացություն չունենալու խնդրով: Վերջիններս քաղաքացիներին տեղավորել են տարբեր հյուրանոցներում:

Կառավարության համապատասխան որոշումներով արդեն հատկացվել է 114 850.9 հազ. դրամ եւ 98 490.5 հազ. դրամ: Այսօրվա որոշմամբ նախատեսվում է փոխհատուցել հունվարի 26-ից մինչեւ փետրվարի 19-ը ներառյալ հյուրանոցների կողմից կատարած ծախսերը, ինչպես նաեւ քաղաքացիների տեղափոխման ծախսերը:

Հյուրանոցներին վճարման ենթակա գումարը փետրվարի 19-ի դրությամբ կազմում է 91 080 500 ՀՀ դրամ, իսկ տեղափոխման ծախսերը՝ 6 380 000 ՀՀ դրամ:

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ԵՆ ՓՈԽԵԼ

ՕՐԵՆՔՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԳՏԵԼ

2023 թվականի հունվարի 17-ին ՀՀ կառավարության կողմից Ազգային ժողով է ներկայացվել ««Դատախազության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագիծը, որը նույն թվականի փետրվարի 7-ին ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ: Նախագծով առաջարկվող փոփոխությունները վերաբերում էին մի քանի հոդվածների, որոնց վերաբերյալ Հայաստանում գործող հասարակական կազմակերպությունները եզրակացություն են տվել եւ նաեւ էական խնդիրներ հայտնաբերել:

Մասնավորապես, նրանց եզրակացության մեջ նշվում է, թե ներկայացվող փոփոխությունների մեջ առկա են մի շարք խնդրահարույց եւ մտահոգիչ առաջարկվող կարգավորումներ: Նախագծով առաջարկվում է հստակեցնել դատախազների թեկնածուների տարիքային շեմին ներկայացվող պահանջը, քանի որ, ըստ նախագծի հեղինակների, պրակտիկայում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, որոնք օրենքի առկա կարգավորումների տարաբնույթ մեկնաբանության տեղիք են տալիս: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացնում որեւէ անձ, ում 22 տարին դիցուք լրանալու է 2 ամիս անց: Տվյալ իրավիճակում օրենքը չի պարունակում հստակ կարգավորումներ, թե արդյոք տվյալ անձը կարող է մասնակցել մրցույթին, թե ոչ, քանի որ 22 տարին լրացած լինելը վերաբերում է դատախազ նշանակվելու ընդհանուր պահանջներին, այլ ոչ թե դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հնարավորությանը:

Այստեղ հասարակական կազմակերպություններն առաջարկում են վերանայել 22 տարեկան տարիքային շեմը եւ նախատեսել առավել բարձր տարիքային շեմ, առնվազն 25 տարեկան՝ հաշվի առնելով թեկնածուների ինչպես մարդկային կարողությունների, այնպես էլ մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձեւավորման անհրաժեշտությունը: Նմանապես կարեւոր է դիտարկել նաեւ պարտադիր մասնագիտական ստաժի առկայությունը՝ որպես թեկնածուից պահանջվող պայման:

Առաջարկվող նախագծով ներկայացված են փոփոխություններ նաեւ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակների կազմման կարգավորումներում: Մասնավորապես, առաջարկվում է վերանայել արտահերթ կարգով համալրվող ծառայողական ցուցակները եւ վերացնել բարեվարքության ստուգման պահանջը: Գործող օրենքի 39-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ արտահերթ կարգով է, երբ գլխավոր դատախազ առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր: Որակավորման հանձնաժողովը գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիրը ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համապատասխան դատախազից պահանջում եւ ստանում է բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը: Որակավորման հանձնաժողովի նախագահը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, այն ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

Որակավորման հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ստանալուց հետո՝ որակավորման հանձնաժողովի նիստից առնվազն երեք օր առաջ, այն տրամադրում է որակավորման հանձնաժողովի անդամներին: Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Առաջարկվող նախագծով նշված հոդվածի մասը նախատեսվում է հետեւյալ բովանդակությամբ.

« 2) արտահերթ կարգով, երբ գլխավոր դատախազն առաջարկություն է ներկայացնում որակավորման հանձնաժողով՝ դատախազին սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով նախատեսված՝ դատախազների առաջխաղացման որեւէ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ՝ ներկայացնելով գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի տված համապատասխան գնահատագիր:

Դատախազն ընդգրկվում է դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում որակավորման հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում: Սույն հոդվածի 1-ին մասի 4-5-րդ կետերով նախատեսված դատախազների առաջխաղացման որեւէ ցուցակում դատախազն ընդգրկվում է՝ իր անմիջական վերադասի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, գլխավոր դատախազի հրամանով»:

Ինչպես կարելի է նկատել, արտահերթ համալրման դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության ստուգում այլեւս չի պահանջվում: Նման փոփոխությունը նախագծով որեւէ հիմնավորում չի ստացել: Այն անընդունելի մի շարք պատճառներով. նախ՝ բարեվարքության ստուգման բացակայությամբ դատախազների առաջխաղացումը հետընթաց քայլ է ընթացիկ դատահիրավական բարեփոխումների համատեքստում:

Միեւնույն ժամանակ նրանք առաջարկում են դատախազական համակարգում համակարգային փոփոխությունների վերաբերյալ քննարկում կազմակերպել շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ, ինչից հետո միայն ընթացք տալ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխություններին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԵԿՆՈՒՄ Է ՖՐԱՆՍԻԱ

ՀՀ վարչապետի որոշմամբ՝ էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանը փետրվարի 27-ից մինչեւ մարտի 1-ը գործուղվում է Փարիզ:

Փոխնախարարը Ֆրանսիայում կմասնակցի Փարիզյան միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Արման Խոջոյանի՝ Ֆրանսիա գործուղման ծախսերը կատարվելու են պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3–ՐԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ավերիչ երկրաշարժից տուժած շրջաններին մարդասիրական օգնության երրորդ խմբաքանակը հասցնելու նպատակով փետրվարի 23-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը կմեկնի Սիրիա:

Ինչպես հայտնում են ԱԳՆ-ից, այցի շրջանակներում Արարատ Միրզոյանը հանդիպումներ կունենա Սիրիայի նախագահի եւ ԱԳ նախարարի հետ:

ԱՅՑԵԼԵԼ Է ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Հայաստան այցի շրջանակում Իտալիայի մշակույթի նախարար Ջենարո Սանջուլիանոյի գլխավորած պատվիրակությունը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանի ուղեկցությամբ, այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր (Ծիծեռնակաբերդ), հարգանքի տուրք մատուցել զոհերի հիշատակին:

Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հարություն Մարությանը հյուրերին ներկայացրել է հուշահամալիրի ստեղծման պատմությունը: Հյուրերը շրջել են նաեւ Հայոց ցեղասպանության թանգարանում, ծանոթացել մշտական եւ ժամանակավոր ցուցադրություններին:

Իտալիայի պատվիրակությունն այցելել է նաեւ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, Հայաստանի ազգային պատկերասրահ եւ «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարան:

ՏՈՒԳԱՆԵԼ ԵՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հասարակության մոլորեցման դրսեւորումներով անբարեխիղճ մրցակցության համար պատասխանատվության միջոցներ է կիրառել «Արզնի կաթնամթերք» ՍՊԸ-ի եւ «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ-ի կողմից արտադրված բուսական յուղի առկայությամբ ապրանքները որպես թթվասեր մակնշելու եւ իրացնելու համար:

Տնտեսավարող սուբյեկտներն ընդունել են իրենց վերագրվող իրավախախտումների փաստը եւ միջնորդել են կիրառել արագացված վարույթներ:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆ՝ ԱՆՊԱՇՏՊԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ

Էլեկտրոնային առեւտուր կատարելիս, ծառայություններ ստանալիս, օրինակ՝ օնլայն վարկերի կնքման, սննդի առաքման, աղրանքի գնման դեպքերում շատ հաճախ քաղաքացին չի տեսնում, գուցե որոշ դեպքերում չի էլ հասկանում, որ իր համաձայնությունն է տալիս որոշակի պայմանների՝ պայմանագրի, որոնցով կարգավորվում են իրենց իրավահարաբերությունները: Այս մասին երեկ «Արմենպրեսի» մամուլի սրահում ասաց ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոնի» տնօրեն Տիգրան Դադունցը:

Նրա խոսքով՝ առաջարկվող օրենսդրական փոփոխությունների հիմնական կտորը վերաբերում է Քաղաքացիական օրենսգրքին՝ հիմնական իրավական ակտին, որով կարգավորում են պայմանագրային հարաբերությունները: «Հիմա շատ զարգացած է օնլայն հարթակներում ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերումը, երբ քաղաքացին ոչ թե թղթային ձեւով, գրավոր է պայմանագիր կնքում արտադրողի, ապրանք վաճառողի կամ ծառայություն մատուցողի հետ, այլ այդ ամենը կատարվում է էլեկտրոնային հարթակում: Այս պարագայում, երբ քաղաքացին ինչ-որ կայքով ծառայություն է ձեռք բերում (օրինակ՝ հիմա շատ տարածված է օնլայն վարկերի կնքումը կամ սննդի առաքման օնլայն ծառայությունները) շատ դեպքերում չի տեսնում, գուցե որոշ դեպքերում չի էլ հասկանում, որ իր համաձայնությունն է տալիս որոշակի պայմանների՝ պայմանագրի, որոնցով կարգավորվում են իրենց իրավահարաբերությունները»,- նշեց Տիգրան Դադունցը: Նա հորդորեց քաղաքացիներին որեւէ պատվեր կատարելիս հավելվածում ուշադրություն դարձնել «օգտագործման կարգ» կամ «պայմաններ» բաժիններին, որտեղ զետեղված են բոլոր այն փաստաթղթերը, համաձայն որոնց՝ կարգավորվում են ապրանք վաճառողների կամ ծառայություններ մատուցողների ու քաղաքացիների իրավահարաբերությունները: Դադունցը կասկած հայտնեց, որ հաճախ քաղաքացիները նույնիսկ չեն էլ ծանոթանում այդ պայմաններին, որովհետեւ դրանք տեսանելի ձեւով չեն զետեղված, եւ խնդիր ծագելիս իրավական առումով հայտնվում են անպաշտպան վիճակում:

«Սա վերջին տարիների զարգացումներից է, ուստի Քաղաքացիական օրենսգրքով նման կարգավորում նախատեսված էլ չէ: Հիմա մենք նախատեսում ենք, որ պայմանագիրը կարող է լինել ոչ միայն մեր իմացած թղթային պայմանագիրը, որտեղ բոլոր կետերը նշված են, եւ քաղաքացին տեսնում է, այլ պայմանագիրը կարող է ունենալ ընդհանուր պայմաններ, որոնք պարտադիր չէ, որ գրված լինեն կոնկրետ ապրանք ձեռք բերելու ընթացքում՝ առանձին պատուհանով: Բիզնեսմենը, ապրանք վաճառողը կարող է հղում անել ընդհանուր պայմաններին, որը պարտադիր պետք է տեսանելի լինի սպառողին: Կարգավորումների հիմնական մեխը դա է, այսինքն՝ բիզնեսմենը պարտավոր է ընդգծված նշում անել, որպեսզի սպառողը հստակ իմանա, որ, առանց նշյալ պայմաններին համաձայնություն տալու, չի կարող օգտվել տվյալ ծառայություններից»,- ընդգծեց Դադունցը: Նրա պարզաբանմամբ՝ այս օրենսդրական փոփոխությունները վերաբերում են Հայաստանում գրանցված ընկերություններին, որոնք էլեկտրոնային առեւտուր կամ ծառայություններ են մատուցում, իսկ արտերկրյա ընկերություններից օնլայն ծառայությունների դեպքում «շատ բարդ դաշտ ենք մտնում», քանի որ այդ դեպքում գործում է տվյալ երկրների օրենսդրությունը: Հաջորդ կարեւոր փոփոխությունը վերաբերում է «միանալու պայմանագրերին», որոնց միանալիս, պայմանագիրը կնքելիս սպառողը չի բանակցում մյուս կողմի հետ, այդպիսի պայմանագրերը համարվում էին տիպային պայմանագրեր, եւ դատարանները վարույթ չէին ընդունում, հիմա փոփոխություններն արված են՝ ի օգուտ քաղաքացու, որը կարող է իր իրավունքները պաշտպանել դատարանում: Տիգրան Դադունցը հավաստիացրեց, որ առաջարկվող փոփոխություններն արվել են՝ հօգուտ քաղաքացու, որն այսուհետ ավելի պաշտպանված կլինի էլեկտրոնային պայմանագրեր կնքելիս: Հիշեցնենք, որ օրենսդրական փոփոխությունների փաթեթն այս պահին Ազգային Ժողովում է:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է 1,7 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎՆԱՍ

ՀՀ քննչական կոմիտեում ամփոփվել են 2022թ. ընթացքում նախաքննությունն ավարտված քրեական վարույթներով հայտնաբերված՝ պետությանը, համայնքներին, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հանցագործությամբ պատճառված գույքային վնասների եւ քննության ընթացքում վնասների վերականգնման վերաբերյալ տվյալները:

Ըստ այդմ՝ նախորդ տարվա ընթացքում ՀՀ ՔԿ ենթակայության՝ նախաքննությունն ավարտված քրեական վարույթներով հայտնաբերված՝ պետությանը, համայնքներին, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հանցագործությամբ պատճառված գույքային վնասը կազմել է ընդհանուր 7.299.459.415 ՀՀ դրամ: Տարվա ընթացքում վերականգնվել է 1.705.747.972 ՀՀ դրամի չափով վնաս: 2022թ. ավարտված վարույթներով բացահայտված ընդհանուր վնասը 2021թ. ցուցանիշը գերազանցում է ավելի քան 1,6 մլրդ դրամով կամ 30%-ով:

Մասնավորապես՝ 2022թ. ընթացքում նախաքննությամբ հայտնաբերված՝ պետությանը պատճառված գույքային վնասը կազմել է 2.475.445.223 ՀՀ դրամ: Նախաքննության փուլում վերականգնվել է 956.223.116 ՀՀ դրամը կամ 38.6%-ը, ընդ որում՝ պետությանը պատճառված վնասների վերականգնման նշված արդյունքը 2021թ. ցուցանիշը գերազանցում է մոտ 37%-ով: Համայնքին պատճառված 312.467.000 ՀՀ դրամ վնասից վերականգնվել է 310.156.000 ՀՀ դրամը կամ 99.2%-ը:

Իրավաբանական անձանց պատճառված 2.257.952.000 ՀՀ դրամ վնասից անցած տարվա ընթացքում վերականգնվել է 173.039.000 ՀՀ դրամը:

Ֆիզիկական անձանց պատճառված գույքային վնասը կազմել է 2.253.595.192 ՀՀ դրամ:

Նախաքննության ընթացքում վերականգնվել է 266.329.856 ՀՀ դրամի վնաս: Միջազգային կազմակերպություններին գույքային վնաս չի պատճառվել:

Ձեռնարկվել են միջոցներ դեռեւս չհատուցված վնասի վերականգնումը երաշխավորելու նպատակով: Կալանք է դրվել մեղադրյալների՝ նախնական հաշվարկով ընդհանուր 1,257.549.000 դրամ արժեքով անշարժ եւ շարժական գույքերի, դրամական միջոցների նկատմամբ, որից ավելի քան 879 մլն-ը՝ պետությանը պատճառված վնասների մասով: Հանցագործությամբ պատճառված վնասների վերականգնումը ՀՀ քննչական կոմիտեում քննվող քրեական վարույթներով իրականացվող նախաքննության առաջնային խնդիրներից է:

ԼՈՒՐԵՐ

ՏՆՕՐԵՆԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում քննվող՝ 2021թ. ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի եւ 2022 թվականի օգոստոսի 14-ին նույն առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթունի եւ փլուզման դեպքի առթիվ նախաձեռնված եւ միացված քրեական վարույթի շրջանակում 2023թ. փետրվարի 22-ին «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրեն Ի. Մ.-ն ձերբակալվել է:

Դատախազի կողմից հարուցված քրեական հետապնդման հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս նույն օրը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 457-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ հրդեհային անվտանգության կանոնները կամ պահանջները խախտելը եւ փաստաթուղթ կեղծելը:

Միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ Ի.Մ.-ի նկատմամբ 2 ամիս ժամկետով կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է: Նախաքննությունը շարունակվում է:

Նշված վարույթի շրջանակում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի 5 անձ՝ «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրենը, փոխտնօրենը եւ 3 տնտեսվարողները, որոնց պահեստային տարածքում առաջացել է պայթյունը: Ներկա պահին արգելանքի տակ է գտնվում մեկ անձ:

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՎ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 22-ին՝ ժամը 21:00-ին, հիվանդանոցից ոստիկանության Էրեբունու բաժին հաղորդում է ստացվել, որ մեջքի կտրած-ծակած արնահոսող վերքով բուժօգնության է դիմել 55-ամյա մի տղամարդ:

Ոստիկանությունից հայտնում են, որ հիվանդանոց օպերատիվ խումբ է մեկնել:

Էրեբունու ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ Մուրացանի փողոցի տներից մեկում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ հիվանդանոց տեղափոխված տղամարդուն ձեռքերով հարվածներ էր հասցրել 35-ամյա փեսան, իսկ 28-ամյա դուստրը դանակով խփել էր մեջքին:

Տուժողի 28-ամյա դուստրը հայտնաբերվել, ձերբակալվել եւ տարվել է ոստիկանության Էրեբունու բաժին:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 67 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՈՂԲԻ ՑԵՂԼԻՏԸ ԿԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԻ

Փետրվարի 14-ին Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցան «Ցեղլիտ տեխնոլոջի» ՍՊԸ-ի կողմից նախատեսված՝ Նոյեմբերյան համանքի Կողբ բնակավայրի «Դիասի քար» տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ: Նոյեմբերյանի համայնքապետարանից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հանրային քննարկումները կայացել են օրենքով սահմանված կարգով, բնականոն ձեւով Նոյեմբերյան խոշոր համայնքի բնակիչների կողմից ցուցաբերված որոշակի հետաքրքրության եւ ակտիվության պայմաններում: Համացանցից տեղեկացա, որ 2020թ. հուլիսի 6-ին Տավուշի մարզի Կողբ համայնքի համայնքապետարանի շենքում տեղի է ունեցել «Ցեղլիտ տեխնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Տավուշի մարզի «Նոյեմբերյանի ցեղլիտային տուֆերի հանքավայրի «Նոր Կողբ» տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանում» նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների երկրորդ փուլը: Երկու տարի առաջ Կողբ բնակավայրում ցեղլիտային տուֆերի արդյունահանման վերաբերյալ հանրային քննարկումների երկրորդ փուլն անցկացրած «Ցեղլիտ տեխնոլոջին» ինչո՞ւ Կողբի հանքավայրում նշված ժամանակ այդ օգտակար հանածոյի արդյունահանում չի իրականացրել, այժմ է Կողբի տարածքում կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ կազմակերպել Նոյեմբերյան խոշոր համայնքում, որի մեջ ընդգրկված է նաեւ Կողբ գյուղը: Այդ կապակցությամբ Նոյեմբերյանի համայնքապետարանից պարզաբանեցին, որ երկու տարի առաջ «Ցեղլիտ տեխնոլոջի» ՍՊԸ-ին Կողբի տարածքում ցեղլիտի արդյունահանման նպատակով հատկացված տարածքը ինչոր սխալի պատճառով քարտեզով համընկել է ցեղլիտ արդյունահանող այլ ընկերությանը տրամադրված տարածքին, այդ պատճառով այն ժամանակ «Ցեղլիտ տեխնոլոջին» Կողբ գյուղի տարածքում ցեղլիտի արդյունահանում չի իրականացրել: Նոյեմբերյանի համայնքապետարանից հայտնեցին նաեւ, որ այդ ընկերությունը Նոյեմբերյան համայնքում գործելու է՝ բնապահապանական օրենսդրությանը համապատասխան, որպեսզի ստանա իր գործունեության վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատական (ՇՄԱԳ), դրանից հետո իրականացնի իր նախատեսած ծրագիրը: Որոշ տեղեկությունների համաձայն՝ «Ցեղլիտ տեխնոլոջի» ՍՊԸ-ն սերտորեն առչվում է «Հրազդան ցեմենտ» ընկերության հետ: Ցեղլիտը բազմաթիվ օգտակար հատկություններով օժտված հանքանյութ է, որի վերամշակումից ստացված արտադրանքը կիրառվում է տարբեր բնագավառներում: Տարիներ առաջ Կողբ գյուղի տարածքից արդյունահանված ցեղլիտի վերամշակման արտադրամաս էր գործում Տավուշի մարզի Այրում քաղաքի սկզբնամասում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

5 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

Կառավարությունը փետրվարի 23-ի նիստում գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատեց մի շարք ընկերություններ:

Մասնավորապես, մաքսատուրքից ազատվեց «ՌՈՄԱՆ ՈՒՍՈՅԱՆ» անհատ ձեռնարկատերը: Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ «ՌՈՄԱՆ ՈՒՍՈՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել կարի արտադրության համար:

Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2021 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 1.3 մլրդ դրամի ներդրում հումքի ու նյութերի ձեռք բերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 50 նոր աշխատատեղ՝ մինչեւ 100 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 1.3 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 113.4 մլն դրամ:

Մեկ այլ որոշմամբ՝ կառավարությունը մաքսատուրքից ազատեց նաեւ «ՍՈՎԹ ՊԱՊԻՐՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, որի կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել անձեռոցիկների, թղթյա սրբիչների արտադրության համար:

Արտադրությունն իրականացվելու է Երեւանում: Ընկերությունը հիմնադրվել է 2014 թվականին: Թողարկված արտադրանքը ամբողջությամբ նախատեսվում է իրացնել ՀՀ տարածքում: Արդեն իսկ իրականացվել է 213 մլն դրամի ներդրում սարքավորումների ձեռք բերման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 180 մլն դրամի ներդրում, որից 150 մլն դրամը՝ սարքավորումների ձեռք բերման, իսկ 30 մլն դրամը՝ շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 24 նոր աշխատատեղ՝ 160 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 2.1 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 218 մլն դրամ:

Մեկ այլ որոշմամբ կառավարությունը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում մաքսատուրքից ազատեց «ՍԱՐՄԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: «ՍԱՐՄԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել մետաղական կափարիչների արտադրության համար: Արտադրությունն իրականացվելու է Երեւան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2003 թվականին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 1.97 մլրդ դրամի ներդրում, որից 157.1 մլն դրամն արդեն իսկ ներդրվել է հումքի ձեռք բերման համար: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 12 նոր աշխատատեղ՝ մինչեւ 133 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 2.6 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 128.3 մլն դրամ:

Կառավարությունը, մեկ այլ որոշմամբ, գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատեց «ՄԱՅԵՌ ՊԼԱՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: «ՄԱՅԵՌ ՊԼԱՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել պոլիէթիլենային խողովակների եւ կցամասերի արտադրության համար: Արտադրությունն իրականացվելու է Երեւան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2016 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 201.4 մլն դրամի կապիտալ ներդրում: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 20 նոր աշխատատեղ՝ մինչեւ 180 հազ դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 3.2 մլրդ դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 209 մլն դրամ:

Կառավարությունը գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում մաքսատուրքից ազատելու արտոնություն տվեց «ՄԱՐՏԻՆ ՍԹԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: «ՄԱՐՏԻՆ ՍԹԱՐ»-ի կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել 2021-2022 թվականներին մեկնարկած պաղպաղակի եւ 2022 թվականին մեկնարկած սեւ եւ լուծվող սուրճերի արտադրությունների համար: Արտադրությունն իրականացվելու է Երեւան քաղաքում: Ընկերությունը հիմնադրվել է 2007 թվականին: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 1.7 մլրդ դրամի ներդրում շրջանառու միջոցների ձեռք բերման համար, որից 1 մլրդ դրամը՝ պաղպաղակի արտադրության, իսկ մնացած մասը՝ սուրճի արտադրության ոլորտում: Նախատեսվում է ներդրումային ծրագրի շրջանակներում ստեղծել 15 նոր աշխատատեղ՝ 313-340 հազ. դրամ միջին ամսական աշխատավարձով: Արտոնություն ստանալու համար ներկայացված ապրանքների արժեքը կազմում է 966 մլն դրամ: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 125 մլն դրամ:

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ

Ո՞Ր ԴԵՊՔԵՐՈՒՄ ՉԻ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ 2022 թվականի հունվարի 1-ից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանվել է, թե որ դեպքերում չի վերադարձվում հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի վճարած տոկոսների գումարների չափով եկամտային հարկը (ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մաս, 4-րդ կետ):

Մասնավորապես, եկամտային հարկը չի վերադարձվում՝

-2022 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով, եթե ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է, կառուցվում է կամ կառուցվելու է Կառավարության որոշմամբ սահմանված շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում:

- 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է, կառուցվում է կամ կառուցվելու է Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված երկրորդ գոտում:

-2023 թվականի հուլիսի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է, կառուցվում է կամ կառուցվելու է Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված երրորդ գոտում:

-2025 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիփոթեքային վարկերի մասով, եթե անշարժ գույքը գտնվում է, կառուցվում է կամ կառուցվելու է Երեւան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ վերոնշյալ կետերում չնշված գոտիներում:

Միաժամանակ, ՊԵԿ-ը տեղեկացնում է՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված սահմանափակումները չեն կիրառվում մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ, ինչպես նաեւ մինչեւ վերոնշյալ փոփոխությունը ստացված հիփոթեքային վարկերի շրջանակում եկամտային հարկի գումարների հետագա վերադարձի նկատմամբ:

ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից 2018 թվականի հունվարի 1-ից հետո վարկառու եւ համավարկառու ֆիզիկական անձինք իրենց ընտրությամբ կարող են օգտվել միայն մեկ հիփոթեքային վարկի պայմանագրի մասով (160-րդ հոդված, 2-րդ մաս, 3-րդ կետ):

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ՃՏՊ. 6 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ԵՐԱԶԱՆՔՆԵՐԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ

Աղջիկ, որ երազում է եւ իրականացնում երազանքներ. արդեն 13 տարի մասնագիտությամբ թուրքագետ Արմինե Աղաջանյանը Եղեգնաձորում՝ իր հիմնած «Մոշ» ստուդիայում, ստեղծում է ձեռագործ աշխատանքներ:

Երեւանում սովորելուց հետո Արմինե Աղաջանյանը մանկության երազանքի հետքերով վերադարձել է հայրենի քաղաք. փոքր քայլերով, դժվարությունները հաղթահարելով ու ինքնակրթվելով՝ ստեղծել է «Մոշ» ստուդիան, որտեղ իրականացվում են նաեւ վարպետության դասեր, սովորեցնում են ասեղնագործություն, տիկնիկագործություն ու կարուձեւ, ձեռագործ հմտություններ փոխանցում:

«Մոշ» ստուդիայում ստեղծվում են հավաքածուներ, որոնք աշխարհին ներկայացնում են Հայաստանի մշակութային հարուստ ժառանգությունը: Հավաքածուներից մեկը կրում է միջնադարի հայ վարպետ Մոմիկի անունը:

Արմինե Աղաջանյանը, երբ սկսում էր բիզնեսը, միայն կիսախարխուլ շենք կար, որը քայլ առ քայլ ոտքի կանգնեցրեց, տեխնիկապես վերազինեց ու դարձրեց Եղեգնաձորի կարեւոր մշակութային կենտրոններից մեկը:

«Եթե ունես ցանկություն ու երազանք, էական չէ՝ կին ես, թե տղամարդ, պետք է հավատարիմ լինես երազանքիդ ու ի կատար ածես բոլոր նպատակներդ: Լինելով կին եւ ծավալելով բիզնես փոքր քաղաքում՝ հանդիպել եմ դժվարությունների ու հասկացել, որ ամեն երազանք հնարավոր է իրականացնել նույնիսկ փոքրիկ գյուղում: Մեր բիզնեսի նպատակներից մեկն էլ եղել է հայկական մշակույթի տարածումը՝ հիմքում վերցնելով խաչքարերի զարդանախշերը: Այս տարիների ընթացքում ունեցել ենք հաջողված գործընկերության բազմաթիվ օրինակներ, որոնցից է «Ակբա» բանկի հետ համագործակցությունը, որի շնորհիվ էլ փորձում ենք զարգացնել մեր բիզնեսը»,- նշում է «Մոշ» ստուդիայի հիմնադիր Արմինե Աղաջանյանը:

Արմինե Աղաջանյանի մեծ երազանքը «Մոշի» սրահներ ունենալն է Եվրոպայում, իսկ առաջիկայում ցանկանում է նման կենտրոններ բացել նաեւ Գյումրիում ու Երեւանում՝ հնարավորություն տալով ավելի շատ կանանց աշխատել ու ինքնադրսեւորվել:

«Ոգեշնչված կին գործարարներով» միջոցառման մասին կարող եք տեղեկանալ՝ այցելելով պաշտոնական կայքէջ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԽՆԴՐԱՆՔՈՎ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ՍՍՌՄ՝ Հզորագույն պետություն, որին հնարավոր չէ բանդել ռազմական ճանապարհով: Հարկավոր է մշակել նոր մեթոդ:

Այդ գործը իր վրա վերցրեց աշխարհին հայտնի խառնակիչը՝ թուրքը: Գնացքը, որին կցված էր 2 վագոն, ճանապարհվեց Բաքվից եւ կանգ առավ Կրասնոդարի կառամատույցում, որտեղ կանգնած էին 2 մարդ, որոնցից մեկը թուրքերի Նիկոլ Փաշինյանն էր՝ Միխայիլ Գորբաչով վերնագրով: Բրեժնեւը իջավ վագոնից, ձեռքը մեկնեց եւ ծանոթացավ Գորբաչովի հետ: Հաջորդ օրը Գորբոչովը թռավ Մոսկվա եւ դարձավ քաղբյուրոյի անդամ: Վերջապես նստելով պետության ղեկին՝ սկսեց կամաց-կամաց քանդել պետությունը: Հայ ժողովուրդը չհասկացավ, որ ՀՀԾ-ն շատ մտածված եւ նուրբ ձեւով կազմակերպված է վերեւից եւ կապ չունի հայ ժողովրդի շահերի հետ: Ժողովուրդը գլխի չնկավ, թե ով է Լեւոն Տեր-Պետրոսյանը, որ հզորագույն պետության մեջ սկսեց կազմակերպել գործադուլներ: ՀՀԾ-ի անդամներին տարան Մոսկվա՝ Գորբաչովի մոտ: Պատմում էին, որ բոլորին պահում էին միեւնույն խցիկում, իսկ Լեւոնին՝ միայնակ առանձին խցիկում, բոբիկ ոտերով, սառը բետոնի վրա: Այդ ոգեւորված պատմություններից 2 օր հետո Լեւոնի եղբայր Կամոն ասում է. «Լեւոնն այսօր ասաց՝ հիմա մենք զենք էլ ունենք»: Եվ, ահա, Մատենադարանի Լեւոնը կարողացավ սովետական բանակից զենք գողանալ: 2 օր հետո գործի դրվեց այդ զենքը: Լեւոնը երկաթգծի սպասասրահում գետին փռեց արյունալվա 6 հոգու դիակ: Հայտարարեցին՝ սովետական բանակն է արել: Վերջապես ՀՀ ղեկին նստեց Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ դառնալով հայ ժողովրդի դահիճը: Թալեաթի օրինակով ասֆալտին փռեց հայոց սերուցքի մի մասնիկ՝ Գրողների միության նախագահ Վ. Պետրոսյանին, երկաթգծի վարչության պետ Ղանդիլյանին, ԱԱԾ-ի պետ Ղուզբաղյանին, գլխավոր դատախազ Խաչատրյանին, քաղաքապետ Հ. Գալստյանին, գեներալ Արծ. Մարգարյանին: Այնուհետեւ սկսեց իրականացնել մասոնների ծրագիրը, այն է՝ պետության ունեցվածքը տալ մի քանի մարդկանց:

Իր հրաժարականից հետո ընդհամենը 4 օր է հովհարային անջատում եղել: 8 տարում ոչնչացրեց արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը: Ժողովրդի ձեռքից խլեց իրենց ունեցվածքը, որը պահում էին Խնայադրամարկղում սեւ օրվա համար: Լեւոնի հայտարարություններն են՝ «մեր ջերմուկը մեզ հերիք է», «մեր տարածքը կարող է երկարել միայն 500 հազար մարդու», «վաղը ավելի վատ է լինելու»: Այս ամենօրյա դեւիզներով կամաց-կամաց ոչնչացնում էր երկիրը՝ վստահորեն իրականացնելով Գորբոչովի ծրագիրը: 48 ժամ Սումգայիթում կոտորում էին հայերին, Գորբաչովը հայտարարում է՝ «Мы всего на пол часа опоздали»: Լեւոնը, ժողովրդին ցրտահարելով, սովամահ անելով, վաղվա սարսափահար վախով հայ ժողովրդին իր տարածքից հեռացրեց: 8 տարում կարողացավ «պլաստիկ օպերացիայի» միջոցով հայ ժողովրդի գլխուղեղից հանել եւ դուրս շպրտել 4 կարեւորագույն բառերը՝

-հայրենասիրություն,
-ինքնասիրություն,
-արժանապատվություն,
-մարդկություն:

Դա է պատճառը, որ աշակերտը կարողացավ գերազանցել իր ուսուցչին եւ «արեւածաղիկ չրթելով»՝ փակել հայ ժողովրդի պատմության վերջին էջը: ՔՊ-ականները իրականացնում են աշխատանքներ մեծ ջանասիրությամբ հանձնելու Սյունիքը եւ Հայաստանից դուրս հանելու ռուսական բանակը:

Երբ ապերախտ զավակները թքում են իրենց պապերի ու տատերի վրա, չեն կարող պետություն կառուցել: Ըստ ապերախտ զավակների՝ կոմունիստները «անասուններ են եղել»:

Ամիր Պետրոսյան

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Կառավարությունն իր երեկվա՝ փետրվարի 23-ի նիստում ««Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» փակ բաժնետիրական ընկերությանն օտար լեզվով (անգլերեն) կրթություն կազմակերպելու թույլտվություն տվեց:

Դա հնարավորություն կտա ««Երեւանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրին» 2023/2024 ուսումնական տարվանից միջնակարգ կրթության երրորդ աստիճանի 11-րդ եւ 12-րդ դասարաններում շարունակել «Միջազգային բակալավրիատի Դիպլոմա» ծրագիրը՝ անգլերենով՝ 3 տարի ժամկետով:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է՝ ճեմարանի կողմից «Միջազգային բակալավրիատի Դիպլոմա» ծրագիրն իրականացվում է 2014 թ-ից՝ ՀՀ կառավարության որոշման եւ Միջազգային բակալավրիատի կողմից ստացված հավաստագրի հիման վրա: Ծրագրի 2016-2023 թթ 123 շրջանավարտներից 24-ը (կամ 20 %-ը) այլ երկրների քաղաքացիներ են, ընդ որում՝ դրանցից 21-ը՝ ազգությամբ հայ, ինչը հնարավորություն է տալիս մայրենի լեզվի ոչ բավարար իմացությամբ հայ երիտասարդներին ավագ դպրոցն ավարտել հայրենիքում՝ ստանալով միջազգային չափանիշներին համապատասխան կրթություն:

ՀՀ կառավարության ներկայիս քաղաքականությամբ պայմանավորված՝ կանխատեսվում է Սփյուռքի հայ ընտանիքների ներհոսք: Ավագ դպրոցում երեխաների կրթությունն ապահովելու հնարավորությունը կնպաստի ընտանիքների՝ հայրենիք տեղափոխվելու որոշմանը:

Քանի որ ծրագրի իրականացման ընթացքում շարունակաբար կատարվում են ուսուցիչների վերապատրաստումներ արտերկրի մասնագետների կողմից, արդյունքում ձեւավորվում է միջազգային չափանիշներին համապատասխան որակավորում ունեցող ուսուցչական համայնք:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱԼԱ ՀԱՄԵՐԳ՝ ԿԱՄԵՐԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՄԲԻ 60-ԱՄՅԱԿԻՆ

Մարտի 2-ին՝ ժամը 19:30-ին, «Արամ Խաչատրյան» համերգասրահում կկազմակերպվի գալա համերգ՝ նվիրված Հայաստանի պետական կամերային նվագախմբի 60-ամյակին: Համերգին կմասնակցեն Հայաստանի պետական կամերային նվագախումբը (գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ Վահան Մարտիրոսյան), Հայաստանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Ռոբերտ Մլքեյան), «Հովեր» պետական կամերային երգչախումբը (խմբավար՝ Սոնա Հովհաննիսյան), Երեւանի պետական կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ խմբավար՝ Քրիստինա Ոսկանյան): Որպես մենակատարներ հանդես կգան Վահան Մարտիրոսյանը (դաշնամուր), Սվետլանա Նավասարդյանը (դաշնամուր), Նիկոլայ Մադոյանը (ջութակ), Նարեկ Հախնազարյանը (թավջութակ):

Դիրիժորներ՝ Վահան Մարտիրոսյան, Զավեն Վարդանյան, Հմայակ Դուրգարյան, Ռոբերտ Մլքեյան: Ծրագրում կհնչեն Լյուդվիգ Վան Բեթհովենի, Կոմիտաս/Զ. Սահակյանցի, Է. Միրզոյանի, Է. Բաղդասարյանի, Վ.Ա.Մոցարտի, Ա. Վիվալդիի ստեղծագործությունները: Համերգը կազմակերպել է Կամերային երաժշտության ազգային կենտրոնը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Նշենք, որ Հայաստանի պետական կամերային նվագախումբը հիմնվել է 1962 թ. ականավոր ջութակահար Զարեհ Սահակյանցի նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ: Շնորհիվ իր վառ անհատականության եւ հեղինակության՝ Զարեհ Սահակյանցը կարողացավ իր շուրջ համախմբել մի խումբ նվիրյալ երաժիշտների, եւ կարճ ժամանակում նվագախումբը ձեռք բերեց մեծ համբավ Հայաստանում եւ երկրի սահմաններից դուրս: Զարեհ Սահակյանցը թողել է կատարողական, ստեղծագործական հարուստ ավանդույթներ, որոնք ժառանգել եւ շենացրել են նվագախմբի հետագա գեղարվեստական ղեկավարները՝ Կոստանդին Բաղդասարյանը (1975 թ.-ից), Ռուբեն Ահարոնյանը (1982 թ.-ից): 1997 թ. նվագախումբը միավորվեց Զավեն Վարդանյանի ղեկավարած Երեւանի կամերային նվագախմբի հետ (գործել է 1979 թ.-ից):

Կազմավորվեց ներկայիս ՀՊԿՆ-ը, որի ղեկավարությունը ստանձնեց ամերիկահայ դիրիժոր Արամ Ղարաբեկյանը: 2011 թ.-ից ցայսօր նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժորն է Վահան Մարտիրոսյանը: Նվագախումբը մեծ ներդրում ունի Հայաստանում կամերային երաժշտական մշակույթի տարածման եւ արմատավորման գործում:

ԼՈՒՐԵՐ

ԼԻԼԻ ԷԼԲԱԿՅԱՆՆ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՎԵԼ Է

12 տարվա համատեղ կյանքից հետո դերասանուհի, ռեժիսոր Լիլի Էլբակյանը եւ ռեփեր, դերասան Համո Ադիյանն այլեւս միասին չեն: Զույգն ամուսնալուծվել է: Այս մասին ArmLur.am-ը տեղեկացավ դերասանուհու ֆեյսբուքյան էջից, որտեղ Լիլին փոխել էր ամուսնության կարգավիճակը: Դերասանուհու գրառումից պարզ է դառնում, որ զույգն ամուսնալուծվել է 2022 թվականի նոյեմբեր ամսին:

«Կատակ չէ, բայց ամեն ինչ լավ է. ողբերգություն չի եղել: Մենք շարունակում ենք մնալ լավ ընկերներ, բայց սեր այլեւս չկա»,- հետեւորդների ափսոսանքին ի պատասխան՝ գրել է դերասանուհին:

Հիշեցնենք, որ Լիլի Էլբակյանը եւ Համո Ադիյանն ամուսնացել էին 2010 թվականի նոյեմբերին, երկու երեխա ունեն՝ Էլմիրան ու Էդգարը: Լիլին եւ Համոն ծանոթացել են «Չնչիկ» ֆիլմի նկարահանումների ժամանակ:

ՖԻԼԻՊ ԿԻՐԿՈՐՈՎԸ ԴԱՐՁԵԼ Է ՇԻԿԱՀԵՐ

Ռուս երգիչ Ֆիլիպ Կիրկորովը վերջերս դիմել է արտաքին կտրուկ փոփոխությունների՝ շիկահեր դառնալով եւ կրելով կապույտ լինզաներ: Ֆիլմի պրեմիերային էլ ներկայացել է Dolce & Gabbana վերարկուով:

Պարզվել է՝ ջինսե հագուստն արժե ավելի քան 4500 դոլար: Հագուստի արժեքը Telegram-ի իր ալիքում հայտնել է ռուս լրագրող Քսենյա Սոբչակը: «Այստեղ Ֆիլիպ Կիրկորովը պրեմիերային ներկայացել է Dolce & Gabbana ջինսե վերարկուով՝ 350 000 ռուբլի արժողությամբ: Ինչ-որ տեղ մենք արդեն տեսել ենք նման բան, լավ, ո՞վ է ավելի զիլ»,- գրել է Սոբչակը՝ Կիրկորովի լուսանկարին կից տեղադրելով Ռիհաննայի՝ նմանատիպ վերարկուով լուսանկարը:

ԼՈՒՐԵՐ

ԿԺԱՌԱՆԳԻ ԴՍՏԵՐԸ

Reddit-ի համահիմնադիր Ալեքսիս Օհանյանը հայկական գորգեր է հավաքում: Նա հույս ունի, որ դուստրը՝ Օլիմպիան, կժառանգի գորգերը եւ կպահի դրանք:

Օհանյանը պատմել է, թե ինչպես են իր նախնիները սպանվել թուրք զինվորների կողմից 1915 թվականի Հայոց ցեղասպանության ժամանակ: Ընտանիքից առգրավվել են երեք գորգ, որոնք եղել են ընտանեկան ժառանգության մաս:

«Այս գորգերը Օլիմպիայի համար են: Իսկ ո՞վ գիտի, գուցե մենք էլի երեխաներ ունենանք: Թակեք փայտին. սա այն երկիրը չէ, որտեղից ես պատրաստվում եմ փախչել: Բայց ես գիտեմ, որ ոչ բոլորն ունեն նման հնարավորություն»,- ասել է Օհանյանը:

Ավելի վաղ նրա կինը՝ Սերենա Ուիլյամսը, պատմել էր, թե ինչպես է Հռոմում իրենց առաջին հանդիպման ժամանակ փորձել առնետով վախեցնել Օհանյանին: Հիշելով, որ առաջին անգամ տեսավ իր ապագա ամուսնուն՝ Ուիլյամսը Vanity Fair-ին ասել է. «Այս մեծ տղան ներս է մտնում եւ պարզապես ընկնում մեր կողքի սեղանի մոտ, իսկ ես ասում եմ. «Շուրջը շատ սեղաններ կան, բայց նա հենց այստեղ է նստե՞լ»:

Ուիլյամսն ու նրա ընկերները փորձել են ստիպել նրան տեղափոխվել դատարկ սեղաններից մեկի շուրջ եւ նույնիսկ ասել են, որ իր կողքին առնետ կա, սակայն Ալեքսիսը չի շփոթվել. Օհանյանը պատասխանել է. «Ես Բրուքլինից եմ: Ես անընդհատ առնետներ եմ տեսնում»: Սերենան ասել է. «Ահ, դու առնետներից չե՞ս վախենում»:

Հետո Ուիլյամսն իր սեղանի շուրջ է հրավիրում Reddit-ի հիմնադրին, իսկ մնացածն իր հունով գնում է:

ԳՆԵԼ Է Heineken-Ի ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

Միլիարդատեր եւ Microsoft-ի համահիմնադիր Բիլ Գեյթսը ձեռք է բերել հոլանդական Heineken Holding NV-ի (HEIO.AS) արժեթղթերի 3,76 տոկոսը: Այս մասին տեղեկացրել է Reuters գործակալությունը: Նիդեռլանդների ֆինանսական շուկաների վարչության (AFM) հայտարարությունում նշվել է, որ արժեթղթերը գնվել են փետրվարի 17-ին: Heineken Holding-ը Heineken NV (HEIN.AS) գարեջրի գործարանի վերահսկիչ փաթեթի սեփականատերն է: Գեյթսը գնել է մեքսիկական FEMSA-ի (որը վաճառում է բաժնեթղթերը) արժեթղթերը:

Գործակալության տվյալներով՝ FEMSA-ն տարբեր գնորդների վաճառել է Heineken Holding-ում իր ունեցած բոլոր 18 մլն բաժնեթղթերը: Ինքը՝ Գեյթսը, 883 մլն եվրոյով (939,87 մլն դոլար) գնել է 10,8 մլն արժեթուղթ՝ ելնելով շուկայում առկա ընթացիկ գնից:

● *Փետրվարի 25-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Չարլին եւ շոկոլադի գործարանը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

Խաղաղ ցույցը ցրելու նպատակով ոստիկանության աշխատակիցը սպառնաց ատրճանակով: Ինչպիսի՞ կարգ է սահմանված ոստիկանների՝ հրազեն կիրառելու վերաբերյալ:

Համլետ Բաղալյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոստիկանության ծառայողները պարտավոր են անցնել հատուկ պատրաստություն, որի շրջանակում սովորում են բանակցություններ վարելու եւ համոզելու հմտություններ ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրումը սահմանափակելու նպատակով, ինչպես նաեւ պարբերաբար անցնել ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների եւ հրազենի գործադրման անհրաժեշտություն առաջացնող իրադրություններում գործելու ունակությունը որոշող ստուգումներ: Համապատասխան պատրաստակա-նություն անցնելուց հետո միայն ոստիկանության ծառայողն իրավունք ունի պահելու եւ կրելու հրազեն ու հատուկ միջոցներ:

ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ոստիկանության ծառայողը, որպես բացառիկ միջոց, գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ եւ հրազեն միայն օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խանութից անհայտ կաթնամթերք եմ գնել, որի օգտագործումից ինքնազգացողություն վատացել է: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Գոհար Մալխասյան (69 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Ձեր կողմից գնած կաթնամթերքի փաթեթավորման վրա առկա չեն տեղեկություններ ապրանքի վերաբերյալ, ապա առկա է խախտում արտադրողի կամ վաճառողի կողմից: Նման իրավիճակում, կախված Ձեր ինքնազգացողության վատթարացման աստիճանից, նախ խորհուրդ է տրվում դիմել շտապ- բուժօգնության ծառայությանը, այնուհետեւ անհրաժեշտ է անմիջապես դեպքի մասին ահազանգել ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն:

ՀՀ սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բացի այդ, Դուք կարող եք այդ ապրանքի վերաբերյալ Ձեր բոլոր բողոքները հայտնել այն խանութի տնօրինությանը, որտեղից գնել եք այն՝ ներկայացնելով ապրանքի համար վճարման անդորրագիրը: Իսկ Ձեր առողջությանը անորակ սննդամթերքի հետեւանքով վնաս պատճառվելու դեպքում կարող եք վնասները գանձելու պահանջով դիմել դատարան:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Հայաստանի շախմատի տղամարդկանց թիմի նախկին անդամ Լեւոն Արոնյանը շարունակում է գլխավորել WR Chess Masters-ի մրցաշարային աղյուսակը:

Արոնյանը միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Նա 6 հնարավորից ունի 4,5 միավոր:

WR Chess Masters մրցաշարին մասնակցում է 10 գրոսմայստեր: Այն կեզրափակվի փետրվարի 25-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: